ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզի << Սուսերի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ- ի տնօրենությունը հայտարարում է մրցույթ մաթեմատիկա (4 դասաժամ), քիմիա (8 դասաժամ), կենսաբանություն (8 դասաժամ), անգլերեն (14 դասաժամ) երաժշտություն (2 դասաժամ), կերպարվեստ (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

ՈՒսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափի:
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ):
3. Անձը հաստատող փաստաթուղթ:
4. (Հանրակրթության մասին) ՀՀ օրենքի 28 –րդ հոդվածի 1 – ին մասի համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում):
5. Ինքնակենսագրություն (Ձև 5)
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ – ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ:
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ:
8. Հրատարակած հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ (առկայության դեպքում):
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճեների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 11-ից օգոստոսի 24-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը , բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 28-ին ժամը 15:00-ին,Սուսերի միջնակարգ դպրոցում, հասցեն ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին համայնք,Սուսեր բնակավայր 1-ին փողոց , շենք 21:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 098 78-09-76